ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2011 թվականի N 214 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 19 ՄԱՅԻՍԻ 2011թ. ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգողի 20 դեկտեմբերի 2011թ. զեկուցագիրը.

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 19 մայիսի 2011թ. թիվ 50-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր /ներառյալ վիճարկվող/ պարտավորությունների <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության փոխանցման ակտում>> կատարել փոփոխություն՝ կրեդիտորական պարտքերը պակասեցնելով 5550494 (հինգ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար չորս հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, որից՝
   1) 1037943 (մեկ միլիոն երեսունյոթ հազար ինը հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ 1996թ. վերջնահաշվարկի գումար
   2) 762482 (յոթ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ՝ եկամտահարկ
   3) 365757 (երեք հարյուր վաթսունհինգ հազար յոթ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ՝ սոց ապահովագրության վճար
   4) 699163 (վեց հարյուր իննսունինը հազար հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ պրոֆ. անդամավճար
   5) 2685149 (երկու միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար հարյուր քառասունինը) ՀՀ դրամ՝ չօգտագործված արձակուրդի դիմաց հատուցման գումար:
2. Հանձնարարել <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ փոխանցման ակտում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

28 դեկտեմբերի 2011թ.
ք. Իջևան